նուած են նոյն Օձունում, որ այժմ պահ են դրուած տաճարում: Նման կոթողական մի շէնք, բայց ԺԳ. դարի գործ, գտնւում է հեռաւոր Սինիքի Աղուդի գիւղում (Պատկ. 37), որ հաւանօրէն ընդօրինակուած է Ծիծեռնակավանքի կամ նման բազիլիկ շէնքի մերձակայ յուշարձանից, որ այժմ անհետացած է, եւ ոչ անմիջապէս Օձունից:

Յուշարձանի, կամարների տակ եղած երկու սիւների արեւելեան, եւ արեւմտեան երեսները* ծածկուած են պատկերներով, քառանկիւնիների մէջ առնուած, իսկ հարաւային եւ հիւսիսային երեսները անկիւնաչերտերի հետ օրնամենտներով, ափսոս միայն, որ կէսով չափ արդէն քերուած է գիւղացիների կողմից, իբրեւ զէնք գործածելով որպէս հիւանդութեան, եւ յաւիտեան կորած գիտութեան համար: Այժմ Հայաստանի կառավարութիւնը ամենախիստ հոկողութիւն ունի այլխական նման երեւոյթի դէմ:

Տարաբաղդաբար ձեռքի տակ չունինք ոչ մեր նկարագրութեան տետրակը եւ ոչ էստամպաժով կամ լուսանկարչութեամբ հանած պատկերները, ուստի եւ չենք կարող տալ նորա կարգաւորեալ նկարագրութիւնը ու լուսանկարները, այլ օգտւում ենք դասախօսութիւնների համար քաղուածօրէն կատարած նկատողութիւններից: Մենք արդէն Ի. Գլխի մէջ յիշել ենք այդ օբէլիսկներից մէկի արեւելեան երեսի քանդակներից ճարտարապետական շէնքի պատկերը եւ բացատրել նորա արժէքը, իբրեւ փաստական ապացոյց հայ գմբեթի Ե.–Զ. դարերում գոյութեան (երես 41): Այս կարեւորագոյն եւ ուշադրութեան արժանի երեւոյթներից մէկն է խոզագլուխ մարդու մի պատկեր, որ միակը չէ, այլ եւ մի քանի ուրիշ օրինակներ ունինք Թալինի գերեզմանական կոթողների վերայ եւ ուրիշ տեղերում, որոնցից մի քանիսի պատկերը տալիս ենք այստեղ անմիջական գաղափար կազմելու այս հետաքրքրական երեւոյթի մասին (Պատկ. 38, 39, 40, 41, նաեւ 95): Տեղական զգեստը մինչեւ ծնկները հասնող գօտէկապ չուխան, եւ նեղ վարտիկը, ապացոյց են նորա ծագման տեղին: Բայց կենդանական գլխով մարդկային քանդակներ տեսնում ենք եւ բազիլիք շէնքերի խոյակների վերայ, որի մի օրինակը Թալինից բերել ենք էջմիածնի թանգարանը. այստեղ խոզի փոխարէն մի այլ կենդանու, գուցէ, շան գլուխ: Անշուշտ, այս երեւոյթի ծագումը Հայաստանում աւելի հին է, բայց հայկական քրիստոնէութիւնը այդ աւանդը գործադրել է նախնական մասնա-



Պատկ. 42

*Պատկ. 25 եւ 25 ա. տես աւելի մանրամասնութիւններով Strzygowski Die Baukunst, պատկ. 665, 666 եւ 667: